ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Հ. Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Քննարկվող ժամանակաշրջանում ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանում տիրապետող տնտեսակարգը ֆեոդալականն էր։ Դրան համապատասխանում էր արդյունաբերության նախակապիտալիստական ձևը։ Նախքան խնդրի քննությանն անցնելը անհրաժեշտ ենք համարում մատնանշել, որ մինչև օրս մեզ մոտ չկա արդյունաբերության հարցերին նվիրված հատուկ աշխատություն։ Պատմական բնույթի որոշ աշխատություններում միայն, այլ հարցերի հետ միասին, այս կամ այն չափով շոշափվել են նաև արդյունաբերության հարցերը։ Մենք նկատի ունենք նախ և առաջ Ի. Շոպենի ստվարածավալ և փաստական նյութով հարուստ աշխատությունը՝ նվիրված Արևելյան Հայաստանի մի մասի պատմության, տնտեսության, կենցաղի և այլ հարցերի քննությանը պարսից տիրապետության վերջին շրջանում[1]*։ Այս աշխատության երրորդ մասի երկրորդ բաժինը վերնագրված է «Արհեստական հարստություններ». հենց նրա առաջին գլուխն էլ նվիրված է արդյունաբերության և առևտրի հարցերին։ Այդ գլուխը վերնագրված է այսպես. «Արհեստային, գործարանային և առևտրական արդյունաբերություն»։*

Պետք է նշել, որ Ի. Շոպենը արդյունաբերության հասկացողությունը աղավաղելուց բացի, տնտեսական երևույթների քննությանը մոտեցել է ոչ գիտական ձևով և փաստերեն խեղաթյուրել է դրանք։ Իհարկե, հարկ չկար, որ արդյունաբերության հարցերը քննելու կապակցությամբ մենք այսօր քննադատական խոսք ասեինք սրանից ավելի քան հարյուր տարի առաջ լույս տեսած գրքի և նրա հեղինակի հասցեին, քաջ գիտակցելով, որ տնտեսական գիտությունն այժմ շատ առաջ է գնացել։ Սակայն բանը նրանում է, որ Շոպենի հիշյալ գիրքը լույս տեսնելուց հետո, նրանում շարադրված ոչ ճիշտ բնորոշումներն ու դատողությունները շարունակում են գրեթե նույնությամբ վերարտադրվել։ Արդյունաբերության այն ձևակերպումը, որ տրված է Շոպենի գրքում, անփոփոխ կերպով շարադրված է նույնիսկ վերջերս միայն լույս տեսած «Հայ ժողովրդի պատմություն» ձեռնարկում։

Ի. Շոպենը արդյունաբերություն ասելով նկատի է ունեցել արհեստը, գործարանը, առևտուրը և այլ զբաղմունքները։ Դրա հետ միասին նա խեղաթյուրել է ինչպես արհեստ, այնպես էլ գործարան հասկացողությունները և այդ ձևով տվել Հայաստանի տնտեսական կյանքի միանգամայն սխալ և անհեթեթ բնութագրությունը։ Ի մի բերելով իր նյութերն ու մտքերը Հայաստանի՝ պարսից տիրապետության վերջին շրջանի արդյունաբերության մասին, Շոպենը կազմել է մի ամփոփիչ աղյուսակ[2]*։ Ըստ այդ աղյուսակի տվյալների, քննարկվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում բացի «գործարանային արդյունաբերությունից» գոյություն են ունեցել արդյունաբերության 96 բնագավառներ, որոնք Շոպենն անվանում է արհեստ և այլ արդյունաբերություն։ Նա գրել է. «Հիշյալ աղյուսակն իր մեջ բովանդակում է Հայկական մարզում հայտնի արդյունաբերության բոլոր տեսակների մանրակրկիտ թվարկումը և նրանցում զբաղված բնակչության քանակը»*[3]*։ Շոպենի կողմից կազմված հիշյալ աղյուսակի քննությունից պարզվում է, որ արդյունաբերությամբ և արհեստով զբաղվողների ցանկում նա գրանցել է նաև* **բաղկալներին, քրաչիներին, աղավնու առնուտ անողներին, զուռնաչիներին, սրնգավաճառներին, վաճառականներին, հեքիմներին, ալյուր վաճառողներին, գերեզմանափորներին, փալան-**

---

[1] И. Шопен. Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, С.-Петербург, 1852.

[2] *Նույն տեղում, էջ 843–850։*

[3] *Նույն տեղում, էջ 842։*

չիներին, պատրաստի հագուստ վաճառողներին, գործակատարներին, այգեպաններին, բանջարաբույծներին, եփած ճաշեղենով առևտուր անողներին, չաչիներին և այլոց[1]։

Արդյունաբերությունը բնութագրող աղյուսակի մեջ վերոհիշյալ զբաղմունքները մտցնելը մի ավելորդ անգամ ցույց է տալիս, թե Շոպենը որքան հեռու է եղել երևույթների գիտական ըմբռնումից և ինչպես է բացահայտորեն աղավաղել Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքի իրական պատկերը։ Երբ Շոպենն անցնում է «արդյունաբերության» առանձին տեսակների բնութագրմանը, նրա մոտ արդյունաբերությունը, արհեստը և առևտուրը նույնացվում են։ Ամփոփելով իր շարադրանքը Շոպենը եզրակացնում է. «Նկարագրելով դասերը, որոնք իրենց նվիրաբերել են մի որևէ օգտակար զբաղմունքի, պետք է հիշել նաև մարդկանց մի հատուկ դասակարգի մասին, որն իրեն համար բնորոշ է ոչինչ չանելու արհեստը։ Դրանք կոչվում են լոթի»[2]։ Այսպիսով, Շոպենը սահմանել է, որ Արևելյան Հայաստանում բնակչությունը, բացառությամբ «լոթիների», զբաղված է եղել 96 տեսակի արդյունաբերություններում, դրանց մեջ մտցնելով հաճախ նաև օգտակար զբաղմունքն ընդհանրապես։

Իհարկե, ավելորդ պահանջկոտություն կլիներ սպասել, որ ցարական մի չինովնիկ, որը ֆիսկալ նպատակներով է զբաղվել տնտեսական հարցերով, տար այնպիսի մի գործ, որն անվերապահորեն ընդունելի լիներ Հայաստանի տնտեսական կյանքը ուսումնասիրելիս։ Հավասարապես սխալ կլիներ պահանջել, որ այդ նույն չինովնիկը արդյունաբերական կամ տնտեսական որևէ կատեգորիայի բնութագրումը տար գիտության ներկայիս պահանջներին համապատասխան։ Սակայն դա երբեք էլ իրավունք չի տալիս ժամանակակից ուսումնասիրողին կրկնելու այսօր այն, ինչ ասված է եղել դրանից հարյուր տարի առաջ և այն էլ բացահայտորեն սխալ կերպով։

Անհրաժեշտ է նշել, որ թեև արդյունաբերությունը, արհեստը, առևտուրը և այլ տնտեսական կատեգորիաները Շոպենի կողմից գիտականորեն չեն բնութագրված, սակայն փաստական այն հարուստ նյութը, որ բերված է նրա գրքում, լայն հնարավորություն է տալիս վերագնահատելու դրանք և տալու հարցի գիտական մեկնությունը։

Շոպենից հետո Հայաստանի արդյունաբերության հարցերը անուղղակի ձևով քննության են առնվել Ա. Ս. Պիրալովի 1900 թ. լույս տեսած «Կովկասի տնայնագործական արհեստագործությունների համառոտ ուրվագծեր» գրքում։ Այստեղ էլ հեղինակը տնայնագործություն հասկացողության տակ նկատի է ունեցել արդյունաբերության մի շարք ձևեր, այն է՝ տնային արդյունաբերությունը, արհեստը, մանր ապրանքային արտադրությունը։ Պետք է նկատել, որ արդյունաբերության նման բնութագրությունը Պիրալովի կողմից ոչինչ ինքնատիպ չի պարունակում, դա կրկնությունն էր ռուս նարոդնիկների, որոնք տնայնագործական արդյունաբերություն տերմինի տակ դնում էին արդյունաբերության զանազան ձևերը։ Քննադատելով նարոդնիկ տնտեսագետներին Վ. Ի. Լենինը նշում էր, թե «տնայնագործություն» հասկացողության մուտքը մեր գրականության մեջ հասցրեց զանազան սխոլաստիկ դատողությունների։ «Մի գիտնական տնայնագործի անվան տակ «հասկանում էր» միայն ապրանքաշրջանառությունը, մյուսը ներառում էր արհեստավորներին. մեկն անհրաժեշտ հատկանիշ էր համարում գյուղի հետ ունեցած կապը, մյուսը թույլատրում էր բացառություններ, մեկը վարձու աշխատանքը դուրս էր գցում, մյուսը թույլատրում էր, օրինակ, թվով մինչև 16 բանվոր և այլն և այլն»[3]։ Այսպիսով «տնայնագործություն» հասկացողությունը չէր արտահայտում արդյունաբերության մի որևէ կոնկրետ ձև, ուստի և գիտական հետազոտության համար Վ. Ի. Լենինը այն համարում էր միանգամայն անպետք հասկացողություն։

«Տնայնագործության» տակ դնելով արհեստներից մի քանիսը, մանր ապրանքային արտադրությունը և տնային արդյունաբերությունը, Պիրալովը «տնայնագործության» գոյությանը հետևյալ հիմնավորումն է տալիս։

«1. Մեր լեռնային երկրում, տարբեր բարձրություններում, սկսած հավերժական ձյան գծից մինչև շոգ հարթավայրերը, ձմեռը շարունակվում էր 3—8 ամիս, երբ համարյա ամբողջ բնակչությունը միանգամայն ազատ է գյուղատնտեսական աշխատանքներից։

2. Հայաստանի և Արևմտյան Վրաստանի հողասակավությունը հնարավորություն չէր տալիս օգտագործել գյուղական բնակչության ողջ աշխատանքը երկրագործության համար։

---

[1] И. Шопен, նշվ. աշխ., էջ 842—850։

[2] Նույն տեղում, էջ 855։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 581։

3. Մուսուլմանուհիները արևելյան և հարավային Անդրկովկասում համարյա չեն մասնակցում դաշտային աշխատանքներին և ազատ ժամանակի մեծ մասը նվիրում են տնայնագործական արհեստագործություններին։

4. Քոչվոր և կիսաքոչվոր բնակչությունը նույնպես հնարավորություն ուներ շատ ժամանակ հատկացնել արհեստագործություններին, հատկապես կանայք։

5. Ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության միանգամայն աննշան զարգացման պայմաններում բնակչության ազատ աշխատանքի հսկայական քանակություն անտեղի, անարդյունաբար կկորչեր, եթե այն կիրառություն չգտներ տնայնագործության մեջ»։ Ապա հեղինակը շարունակում է. «Երկրի բնական պայմանների և կենցաղային առանձնահատկությունների հետևանքով գյուղական բնակչությունը դեռևս անհիշելի ժամանակներից ստիպված է վերամշակել բազմազան հումք, մշակելով անհրաժեշտ տեխնիկական և գեղարվեստական պրիոմներ արտադրության բազմազան ճյուղերի համար»[1]։

Այնուհետև հեղինակը մի առ մի քննության է ենթարկում «տնայնագործության» այն ճյուղերը, որոնք տարածված են եղել երկրի այս կամ այն մասերում։ Փաստական նյութի ուսումնասիրությունից պարզվում է, որ այսպես կոչված «տնայնագործական արհեստագործությունների» մի զգալի մասը այլ բան չէ, քան գյուղացու ընտանիքում հումքի վերամշակում՝ իր իսկ սեփական պահանջմունքները բավարարելու համար, իսկ մնացած մասն էլ արհեստային արտադրություն է, որին հեղինակը մի ընդհանուր սահմանում է տվել՝ «տնայնագործական արհեստագործություններ»։

Տնային արդյունաբերության անտեսումը շատ ավելի կոպիտ սխալների է հանգեցրել Ի. Շոպենին, երբ նա նույնացրել է արհեստների հետ։ Շոպենը արհեստի տակ դրել է բոլոր զբաղմունքները, բացի գյուղատնտեսական աշխատանքներից, առանձնացնելով միայն այսպես կոչված «գործարանային արդյունաբերությունը»։ Դրա հետևանքով նա արհեստականորեն մեծացրել է արհեստների և արհեստավորների թիվը ի հաշիվ տնային արդյունաբերության, որովհետև տնային արդյունաբերությունը նույնացրել է արհեստի հետ։

Պարսից տիրապետության վերջին շրջանում Արևելյան Հայաստանում, ըստ Շոպենի, գոյություն են ունեցել արհեստի 96 տեսակներ, որոնցով զբաղված է եղել 10124 մարդ։ Նույն Շոպենի տվյալներով պարսից տիրապետության վերջին շրջանում Երևանի, Նախիջևանի և Օրդուբատի խանության ողջ բնակչության թիվը կազմել է 118650 մարդ, որի մոտ 20 տոկոսը կազմել են քոչվորները և մոտ 10 տոկոսը՝ արտոնյալ դասի ներկայացուցիչները, որոնք, իհարկե, արհեստով չէին զբաղվում։ Դուրս գալով այդ քանակությունը, մնում է 84 հազար մարդ, որից, ինչպես պնդում է Շոպենը, 10124-ը զբաղվել են արհեստով։ Այդ նշանակում է, որ աշխատունակ բնակչության 4-ից մեկը արհեստավոր է եղել, որն իհարկե, հիմնովին սխալ է։ Գաղտնիքն այն է, որ գյուղացիների ամեն մի զբաղմունք, որը երկրագործական կամ անասնապահական չի եղել, այլ կապված է եղել այդ ճյուղերի արտադրանքի վերամշակման հետ, Շոպենը համարել է արհեստ։ Դրանով է բացատրվում նաև Շոպենի այն անհիմն և ըստ էության մտացածին հայտարարությունը, որ նա անում է Հայաստանի արհեստների և արհեստավորների մասին։ Ահա թե ինչ է ասում նա. «Այստեղի կիսավայրենի երկրում արհեստն ամեն մի քայլափոխում հիշեցնում է այն ժամանակը, երբ մարդը նոր-նոր հասկանալով հասարակական կյանքի օգտակարությունը, թողեց անասունները և քարանձավները և խարխափելով սկսեց բոլոր կողմերով դեռ անհաջող իր փորձերը։ Մինչև այժմ էլ այստեղի արհեստավորը առանց դաղգահի, գործիքների, աննկարագրելի ջանքերով աշխատում է ձեռքերով ու ոտքերով իր անհաջող շինվածքի վրա, գլխի չընկնելով նույնիսկ, որ կարելի է նույնը պատրաստել ավելի քիչ աշխատանքով և անհամեմատ ավելի լավը»[2]։ Հասկանալի է, որ ցարական չինովնիկ Շոպենը այլ կերպ չէր կարող արտահայտվել գաղութային բնակչության մասին, քան նրանց անվանելով վայրենիներ կամ կիսավայրենիներ։ Սակայն դա հարցի մի կողմն է։ Արհեստների խիստ հետամնացության մասին նրա կեղծ պատկերումը հետևանք է միաժամանակ իր իսկ տգիտության, երբ նա տարբերություն չի դրել գյուղացու ընտանիքում կատարվող տնային արդյունաբերության և արհեստների միջև։ Այսպես ինչո՞վ բացատրել Շոպենի այն պնդումը, թե Հայկական մարզի յուրաքանչյուր ընտանիք ունի ջուլհակային հաստոց, բամբակից ու բրդից պատրաստում է գործվածք

---

[1] А. С Пиралов, Кустарная промышленность закавказских республик, *տե՛ս* «Закавказье, статистическо-экономический сборник», Тифлис, 1925, *էջ 371—372։*

[2] И. Шопен, *Նշվ. աշխ., էջ 842։*

և այդ հիման վրա էլ հայտարարում, թե ջուլհակները կազմում են այստեղի արհեստավորների ամենաբազմամարդ դասը[1]։

Ըստ Շոպենի հաշիվների, ջուլհակային հաստոցների թիվը կազմել է 4204, իսկ տարեկան արտադրանքը՝ 500000 արշին։ Ուրիշ խոսքով, ամեն մի հաստոցով տարեկան արտադրվել է 119 արշին կտավ։ Անվազն անհեթեթություն է պատկերացնել, որ ջուլհակ արհեստավորը տարեկան գործել է ընդամենը 199 արշին կտավ։ Այդպես է ստացվել, որովհետև Շոպենը նույնացրել է արհեստավոր-ջուլհակին և գյուղացու ընտանիքում սեփական կարիքների համար աշխատողներին, այսինքն՝ տնային եղանակով կտավ գործողներին։ Պետք է ընդունել, որ Շոպենի կողմից ցույց տրված ջուլհակ-արհեստավորների մեծամասնությունը արհեստավորներ չեն եղել, ուստի և դրանց արհեստավոր համարելով Շոպենը անհիմն կերպով վարկաբեկել է ջուլհակ արհեստավորներին, որոնք ոչ միայն նոր չէին դուրս եկել քարանձավներից, այլև ժառանգելով անցյալի սերունդներից արհեստի շատ բարձր կուլտուրա, իրենց հմտությամբ և գործվածքների գեղարվեստական ձևավորմամբ շատ ժողովուրդների հիացմունքն էին առաջացնում։ Այն ցածր արվեստով աշխատող «ջուլհակը», որին այնքան մռայլ գույներով ներկայացրել է Շոպենը, արհեստավոր չէր, այլ սովորական գեղջկուհի, որը կտավ էր գործում ոչ թե պատվերով, այլ սեփական ընտանիքի անդամների առօրյա պահանջները բավարարելու համար։ Դա ճախարակ մանող և ապա գործող այն գեղջկուհին էր, որի վիշտն ու ցավն է երգել հայ բանաստեղծը, երբեք էլ չհամարելով նրան արհեստավոր։ «Ճախարակ»-ի հեղինակը շատ ավելի լավ էր հասկանում տնային արդյունաբերության էությունը, քան մեր ժամանակի այն տնտեսագետները, որոնք, կրկնելով Շոպենին, տնային արդյունաբերությունը նույնացնում են արհեստների հետ։

Ցավոք պետք է նկատել, որ Շոպենի կողմից Հայաստանի նախակապիտալիստական շրջանի արդյունաբերության մասին տված բնութագրությունը նույնությամբ կրկնվել է հետագայում այդ հարցով զբաղվողներից շատերի կողմից և շարունակում է կրկնվել նաև այժմ։ 1957 թ. լույս տեսած «Հայ ժողովրդի պատմության» միջնակարգ դպրոցի ձեռնարկի II մասում կարդում ենք. «XIX դարի 30-ական թվականներին Հայկական մարզում արհեստների թիվը հասնում էր 96-ի։ Արհեստներով զբաղված էր ավելի քան 10 հազար մարդ, որից Երևանում՝ 2349, Նախիջևանում՝ 715, Օրդուբադում՝ 608, իսկ շրջաններում՝ 6476»[2]։ Դժվար չէ նկատել, որ վերևում բերված թվերը Շոպենի կազմած աղյուսակի հանրագումարային տվյալներն են, որոնք, ինչպես ասել ենք, արհեստավորների մեջ են ընդգրկում աղամնների առևտրականներին, հեքիմներին, չարչիներին, գերեզմանափորներին, կառնաչիներին և բազմաթիվ այլ կարգի, արտադրական նշանակություն չունեցող զբաղմունքների տեր մարդկանց։ Այսպիսով ստացվում է, որ արհեստի և արդյունաբերության մասին սրանից ավելի քան հարյուր տարի առաջ Ի. Շոպենի կողմից տրված ոչ գիտական սահմանումները ընդունվում են անվերապահորեն։

Շարունակելով Շոպենի տված բնորոշումները, դասագրքում ասվում է. «Արհեստներից ամենատարածվածը ջուլհակությունն էր։ Հայկական մարզի բնակիչներից շատերն ունեին իրենց դազգահները և բամբակից թել էին մանում և կտավ գործում։ Դազգահների թիվը հասնում էր 4206-ի, իսկ կտավի տարեկան արտադրանքը կազմում էր մոտ 500 հազար արշին։ Արհեստավորները տարիներ շարունակ մասնագիտանում էին մեկ կամ մի քանի իրեր պատրաստելու մեջ և երբեմն կատարելության էին հասցնում իրենց ձեռքի աշխատանքը»[3]։ Ինչպես երևում է, այստեղ էլ նույն Շոպենի կազմած աղյուսակի թվերն են բերված ու այն դատողությունները, որ կատարել է Շոպենը ջուլհակության վերաբերյալ։

Նույն ձևով Շոպենի թվերն ու մտքերը վերարտադրվել են նաև «Ակնարկներ XIX դարի հայ տնտեսական մտքի պատմության» գրքում, որը լույս է տեսել 1955 թ.։ Այնտեղ մենք կարդում ենք. «Ռուսաստանին միանալու շրջանում Հայաստանում հաշվվում էր մոտավորապես 4200 ջուլհակային հաստոց, որոնք մշակում էին տարեկան ավելի քան 500 հազար արշին կտավ։ Արհեստավորների մեջ ջուլհակներն առավել բազմամարդ էին։ Համարյա յուրաքանչյուր ընտանիքում պատրաստվում էին բրդյա գործվածքներ, դրանով հիմնականում զբաղված էին կանայք»[4]։ Ինչպես նկատում ենք, գյուղացու տանն իր սեփական կարիքների համար գործվող կտավի արտադրությունն էլ համարված է արհեստ, որը հիմնովին սխալ է։

---

[1] И. Шопен, *նշվ. աշխ., էջ 85։*

[2] *«Հայ ժողովրդի պատմություն», II մաս, Երևան, 1957, էջ 52։*

[3] *Նույն տեղում, էջ 54։*

[4] Х. Гуланян, Очерки истории армянской экономической мысли XIX века, Москва, 1955, *էջ 46։*

Այդ մասին մենք կխոսենք արդյունաբերության տարբեր ձևերը քննելիս, իսկ այժմ մատնանշենք, որ հայ ժողովրդի պատմության ձեռնարկում էլ ժխտվել է արհեստի՝ արդյունաբերության ձևերից մեկը լինելը։ Ահա ինչ է ասված այնտեղ. «XIX դարի առաջին կեսին Հայաստանում արդյունաբերություն այդ բառի իսկական իմաստով գոյություն չուներ։ Բայց կային տնայնագործական զանազան ձեռնարկություններ, որոնք՝ արհեստների հետ միասին, կարևոր դեր էին խաղում ժողովրդի առօրյա կարիքները բավարարելու գործում»[1]։ Սաղցվում է, որ նույնիսկ XIX դարի առաջին ինքն էլ Հայաստանում արդյունաբերություն չի եղել, այլ եղել են արհեստներ և տնայնագործություն։ Այդպիսի մոտեցումը հիմնովին սխալ է և չի համապատասխանում արդյունաբերության գիտական հասկացողությանը։ Փոխանակ նշելու արդյունաբերության այս կամ այն կոնկրետ ձևի բացակայությունը, ժխտվում է առհասարակ արդյունաբերության գոյությունը, անտեսելով, որ արհեստները և «տնայնագործական ձեռնարկությունները», որոնց մասին հիշատակվում է, այլ բան չեն, քան արդյունաբերություն։ Իսկ թե ինչ է նկատի առնված «տնայնագործական ձեռնարկություններ» հասկացողության տակ, այդ մասին ձեռնարկում ոչինչ չի ասվում։

* * *

Արդյունաբերությունը, որպես տնտեսական գործունեության ասպարեզ և որպես ժողովրդական տնտեսության ճյուղ, տարբերվում է տնտեսական գործունեության մյուս ասպարեզներից իր աշխատանքի գործիքներով, աշխատանքի առարկաներով ու վերջիններս գործադրության մեջ գնող օգտակար աշխատանքի տեսակներով։ Գիտականորեն ապացուցված է, որ արդյունաբերությունը տնտեսական գործունեության այն ասպարեզն է, կամ ժողովրդական տնտեսության այն ճյուղը, որը երկրի ընդերքից օգտակար հանածոներ է հայթայթում (հայթայթող արդյունաբերություն) և վերամշակում դրանք, բացի այդ վերամշակում է նաև գյուղատնտեսական հումքը (վերամշակող արդյունաբերություն)։ Արդյունաբերությունը, որպես այդպիսին, իր զարգացման ընթացքում անցել է տարբեր փուլեր, և մարդկանց արդյունաբերական գործունեությունը իրականացել է արտադրողների և սպառողների միջև հասարակական տարբեր կապերի և հարաբերությունների պայմաններում։ Դրանց համապատասխանել են արդյունաբերության արտադրանքը հասարակության տարբեր խմբերի միջև բաշխելու ձևերը։

Որո՞նք էին նախակապիտալիստական շրջանի արդյունաբերության ձևերը և ի՞նչ չափով էին դրանք տարածված Հայաստանում XVIII դ. վերջերին ու XIX դ. սկզբներին և հետագայում՝ մինչև կապիտալիստական հարաբերությունների ծագումը։

Փաստական նյութի հետազոտությունը ցույց է տալիս, որ քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանի տնտեսության մեջ արդյունաբերությունը գոյություն է ունեցել հետևյալ չորս ձևերով. տնային արդյունաբերություն, մանր ապրանքային արտադրություն, արհեստ և մանուֆակտուրա։

Արդյունաբերության սկզբնական ձևը, որ տակավին չէր անջատվել գյուղատնտեսությունից, ինչպես ամենուրեք, այնպես էլ Հայաստանում հանդիսացել է տնային արդյունաբերությունը։ Այն նախորդել է արդյունաբերության մնացած ձևերին և նրա ծագումը շատ հին է։ Հասկանալի է, որ տնտեսական կյանքի զարգացմանը զուգընթաց հնազհետ նվազել է տնային արդյունաբերության դերն ու նշանակությունը։ Տնտեսական զարգացման այն աստիճանը, որում գտնվում էր Հայաստանը XVIII դ. վերջերին և XIX դ. սկզբներին, ոչ միայն չէր բացառում տնային արդյունաբերության գոյությունը, այլև ենթադրում էր այն։

Ո՞րն է արդյունաբերության այդ ձևի էությունը և որո՞նք են նրա բնորոշ գծերը։ Տնային արդյունաբերություն ասելով մենք հասկանում ենք հում նյութի մշակումը գյուղացիական ընտանիքում։ Դրա բնորոշ դիծն այն է, որ հումքի հայթայթումը և նրա վերամշակումը կատարվում է գյուղացիական ընտանիքի անդամների կողմից, չի կիրառվում ուրիշի աշխատանքը, իսկ արդյունքը բացառապես ծառայում է սեփական պահանջների բավարարմանը։ Այլ խոսքով ասած, արդյունաբերության այդ ձևը հատուկ է բնատնտեսությանը, կազմում է նրա բաղկացուցիչ մասը և ենթադրում է մանր գյուղացիական տնտեսությունների առկայությունը. իր այդ ձևով ու բնույթով տնային արդյունաբերությունը միացած է գյուղատնտեսության հետ։ Բամ-

[1] «Հայ ժողովրդի պատմություն», II մաս, էջ 54։

քակի, բրդի տնային վերամշակումը և դրանցից տնային ձևով սեփական պահանջմունքները բավարարելու համար հագուստ պատրաստելը բնատնտեսության անխուսափելի ուղեկիցներն են։

Պետք է նշել, որ արդյունաբերության այս ձևի գոյությունը հայ պատմագիտական գրականության մեջ լիովին անտեսվել է և, ինչպես տեսանք, արդյունաբերության այս ձևը նույնացվել է արհեստի հետ։ Դրանով իսկ մի կողմից արհեստականորեն լայնացվում էին արհեստի շրջանակները, իսկ մյուս կողմից՝ փաստորեն անտեսվում էին գյուղական ընտանիքում կատարվող, հումքի վերամշակման հետ կապված արտադրական գործունեության բազմաթիվ տեսակները։ Բամբակի ու բրդի վերամշակումը տնային արդյունաբերության կարևոր ասպարեզն էր, քանի որ ստացված թելերից, տնային կլկին վերամշակման ձևով, գյուղացիներն ստանում էին գործվածքներ ու կարում հագուստ։ Բրդյա գործվածքներից մեծ մասամբ պատրաստում էին վերնազգեստներ, գուլպաներ, ձեռնոցներ, իսկ բամբակյա գործվածքներից՝ ներքնազգեստ։ Բրդի կոշտ տեսակներից, ինչպես և այծի մազից գյուղական ընտանիքում պատրաստում էին զանազան պարաններ, թոկեր, լարեր և այլն, որոնք օգտագործվում էին անասուններին կապելու, բարձած սայլերի բեռն ամրացնելու և այլ նպատակներով։ Շատ տարածված էր կոշտ բրդից և մազից մեծ պարկեր պատրաստելը (6—12 փութ հացահատիկի տարողությամբ)։

Անասնապահական մթերքների վերամշակումը յուրաքանչյուր գյուղական ընտանիքի ու հատկապես կանանց գործունեության կարևոր ասպարեզն էր (առաջին հերթին՝ կաթի վերամշակումը և նրանից յուղի ու զանազան կաթնամթերքների ստացումը)։ Տնային եղանակով էին վերամշակվում կաշին և մորթին։ Հայ գյուղացին ինքն էր պատրաստում իր ընտանիքի անդամների համար ոտնամաններ (մեծ մասամբ տրեխներ)։ Կաշվից պատրաստում էր լծափոկեր, զանազան չափի և հաստության կաշվե թոկեր և այլ հարմարանքներ, որոնք օգտագործվում էին արորի, գութանի, կամի, սայլի և այլ գործիքների օգտագործման ժամանակ։ Տնտեսական նշանակություն ունեին ոչխարի և այծի մորթիները, հորթի կաշին և այլն, որոնցից պատրաստում էին մուշտակներ, գլխարկներ և այլն։

Տնային վերամշակության էր ենթարկվում ցորենի, գարու, բրնձի ծղոտը, որից պատրաստում էին ամառային գլխարկներ, սալաներ, հացամաններ և դեղարվեստական զանազան իրեր։ Կավի տնային վերամշակումը գյուղացիներին տալիս էր ամեն չափսի ու տեսակի ամաններ, կարասներ, կժեր, թոնիր և այլն և այլն։

Քննարկվող ժամանակաշրջանում տնային արդյունաբերությունը դեռևս այնքան կենսունակ էր, որ հազիվ թե հնարավոր լիներ գտնել մի գյուղական ընտանիք, որն այս կամ այն չափով զբաղված չլիներ գյուղատնտեսական հումքի տնային վերամշակությամբ։ Ավելին, եթե մենք ուզենանք սահմանազատել տնային արդյունաբերությունն արհեստից ու ցույց տալ դրանցից յուրաքանչյուրի խաղացած դերը գյուղական կյանքում, կնկատենք, որ տնային արդյունաբերության նշանակությունը արհեստի համեմատությամբ դեռևս շատ մեծ էր։

Մանր ապրանքային արտադրություն։ Արդյունաբերության տնային ձևն այն է, երբ գոյություն չունի ոչ ապրանքային արտադրություն և ոչ էլ ապրանքային շրջանառություն։ Սակայն սխալ կլինի կարծել, թե ֆեոդալական հասարակության պայմաններում, ուր բնատնտեսության հետ միասին ավել կամ պակաս չափով առաջանում են ապրանք-դրամական հարաբերությունները, արդյունաբերության մյուս ձևերը իսպառ բացակայում են։ Արդյունաբերության հիշյալ ձևերի հետ միասին գյուղում սկսում է անել նաև մանր ապրանքային արտադրությունը, որի արտադրանքի որոշ մասը հանդիսանում է ապրանք։

Գյուղացիական մանր արդյունաբերությունը Հայաստանում զարգանում էր գլխավորապես տեղական շուկաներին մոտ շրջաններում, այգեգործական և տեխնիկական կուլտուրաների մշակման վայրերում, օգտակար հանածոների որոշ տեսակներով (գլխավորապես աղ և մետաղներ) հարուստ վայրերում։ Այսպես օրինակ, գյուղական մանր ապրանքային արտադրությունը XVII—XVIII դարերում արագորեն զարգանում էր Կողբի աղահանքերի մոտակա գյուղերում և հատկապես Կողբ գյուղում։ Այդ գյուղի արական սեռի չափահաս բնակչության զգալի մասն զբաղված էր աղի հայթայթմամբ։ Կողբի աղահանքը բաժանված էր առանձին տեղամասերի, և ով առաջինն էր մաքրել աղահանքի վերին շերտերը, նա էլ դառնում էր ավելի տեղամասից միակ աղ հանողը։ Այդ ձևով գյուղացիները աղահանքը փաստորեն բաժանել էին իրենց միջև և շատ հաճախ արդեն մաքրված տեղամասերը վաճառում էին միմյանց։ Կողբի աղահանքերը Անդրկովկասում համարվում էին խոշոր աղահանքեր, այստեղից աղ էր փոխադրվում ոչ միայն Արևելյան Հայաստանի տարբեր մասերը, այլև Վրաստան, մասամբ նաև Արևմտյան Հայաստան և այլուր։ Աղի հանույթով զբաղված գյուղացիները իրենք չէին փոխադրում աղը վաճառքի վայրը և ոչ էլ հատուկ միջնորդներ կային այդ գործի համար։ Տրադիցիոն կերպով տարբեր վայրերից այստեղ

էին ժամանում սայլերի քարավաններ, որոնք աղը գնում էին անմիջական արտադրողներից և տեղափոխում իրենց բնակավայրը, մեծ մասամբ սեփական կարիքների համար։ Աղի արդյունահանությամբ զբաղվող գյուղացիներից ոմանք էլ հաճախ իրենք էին կատարում առևտուրը, մեծ մասամբ Կարսի շրջանում, ուր աղը փոխանակում էին հացով։

Գյուղացիական մանր արդյունաբերության ճյուղերից էր նաև ծծմբի հայթայթումը, որով զբաղված էին Արագածի ստորոտում տեղավորված գյուղերի բնակիչները։ Անտառներով հարուստ շրջանների գյուղացիներն զբաղվում էին փայտի ու փայտածուխի արտադրությամբ, որն իրացվում էր գլխավորապես Երևանի և Էջմիածնի շուկաներում։ Օրդուբադի շրջանի գյուղացիները անջրդի և աղակալած հողերից հավաքում էին դառը և թթու մի բույս, որ կոչվում էր «շորան» և որի վերամշակումից ստանում էին սոդա։ Գառնի-Բասարի մահալի Շեյխզադե գյուղի բնակիչները շորանից պատրաստում էին օճառ և իրենք էլ փոխադրում այլ գյուղեր վաճառելու համար։ Այդ գյուղը հետագայում կոչվեց Սաբունչի։ Այգեգործական գյուղերի բնակիչները չորացնում էին սեփական այգում աճեցված պտուղները և վաճառքի հանում ուրիշ շրջաններում։

Գյուղական մանր ապրանքային արդյունաբերությանն էր վերաբերում նաև բրուտագործության որոշ մասը, հատկապես այն գյուղերում, որոնց բնակչությունը կավ էր հայթայթում և նրանից պատրաստում զանազան չափսերի գինու կարասներ՝ հիմնականում վաճառքի նպատակով։ Արդյունաբերության այդ ճյուղը մեծ զարգացում էր ստացել մանավանդ Յուվա գյուղում։

Գյուղական մանր ապրանքային արտադրության մեջ պետք է հաշվել նաև քունջութի ու կտավհատի վերամշակումը, նրանցից յուղ ստանալը։ Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանի տարբեր մասերում կային հարյուրավոր ձիթհան ձեռնարկություններ, ուր վերամշակվում էին յուղատու կուլտուրաները։

Արհեստավորական արդյունաբերությունը։ *X—XII* դարերում Հայաստանում ծաղկած քաղաքային արհեստները հետագա դարերում կատարյալ անկում ապրեցին։ Արհեստավորների մի մասը բռնի ուժով քշվել էր երկրից (գլխավորապես Միջին Ասիա, Եգիպտոս և այլուր), մի մասն էլ գաղթել էր Ռուսաստան, Արևմտյան Եվրոպա, Հնդկաստան։ Հայաստանի արհեստագործության հին կենտրոններից շատ քչերն էին, որ XVII—XVIII դարերում պահպանել էին իրենց նշանակությունը։

Քննարկվող ժամանակաշրջանում արհեստագործությունը աշխուժացավ գլխավորապես անցյալի արհեստների որոշ մասի վերակենդանացման հաշվին և ավելի քիչ չափով՝ աշխատանքի հասարակական բաժանման խորացման հիմքի վրա։ Հին արհեստները վերակենդանանում էին նոր կենտրոններում, ընդ որում անցյալի համեմատությամբ շատ ավելի ցածր մակարդակով։ Փոխվել էր նաև արհեստագործության ճյուղային կառուցվածքը. անհետացել էին անցյալում գոյություն ունեցած կալվածատիրական, եկեղեցական գործարանները՝ նրանցում արտադրված առարկաների շատ տեսակների հետ միասին։ Արհեստագործական արտադրանքը հիմնականում տեղական նշանակություն ուներ. անցյալի համեմատությամբ նրա շատ ավելի փոքր մասն էր դուրս գալիս երկրի շրջանակներից։ Քննարկվող ժամանակաշրջանում քաղաքային արհեստը կենտրոնացած էր Երևանում, Կարսում, Կարինում, Երզնկայում, Վանում, Բայազետում, Մուշում, Բաղեշում և այլն։ Թեպետ արհեստը տարածված էր նաև գյուղում, սակայն այն շարունակում էր մնալ քաղաքային կյանքի հիմնական կողմերից մեկը։ Քաղաքներում արհեստը հանդես էր գալիս իր մաքուր կերպարանքով, այսինքն՝ շինվածքն արտադրվում էր սպառողի պատվերի համաձայն, ընդ որում նյութը կարող էր պատկանել կամ արհեստավորին, կամ պատվիրատուին, իսկ արհեստավորի աշխատանքը հատուցվում էր թե փողով, և թե բնամթերքով։

Եթե մենք արհեստների ու արհեստավորների մասին Շոպենի կազմած ցուցակից հանենք նրանց, ովքեր զբաղվում էին տնային արդյունաբերությամբ և մանր ապրանքային արտադրությամբ, Արևելյան Հայաստանի համար կստանանք արհեստների սահմանափակ ցանկ ու բացի այդ էլ՝ արհեստավորների շատ ավելի փոքր թվաքանակ։ Ահա այդ թվերը, որ վերաբերում են Երևանի, Նախիջևանի և Օրդուբադի գավառներին[1]։ (Տե՛ս աղյուսակը, էջ 99)։

Այսպիսով, պարսից տիրապետության վերջին շրջանում Արևելյան Հայաստանում եղել է ոչ թե 96 տեսակ արհեստ՝ արհեստավորների համապատասխան թվաքանակով, այլ, ինչպես երևում է աղյուսակից, շատ ավելի պակաս։ Մատնանշենք, որ ցուցակներից արհեստավոր պետք

[1] Աղյուսակը կազմված է Ի. Շոպենի աղյուսակի հիման վրա, հանելով ոչ արհեստավորներին։ Տե՛ս И. Шопен, նշվ. աշխ., էջ 843—850։

է համարել միայն քաղաքում զբաղվածներին, նկատի ունենալով, որ, ինչպես վերևում տեսանք, գյուղական ջուլհակներին պետք է դասել տնային արդյունաբերության մեջ զբաղվածների շարքը։

Արհեստների տեսակները	Արհեստով զբաղվողների թիվը		Ընդամենը արհեստավոր
	քաղաք	գյուղ	
1. Մաշկակարներ	213	61	274
2. Բրուտագործներ	20	88	108
3. Քարտաշներ	47	66	113
4. Աղյուսագործներ	—	2	2
5. Կաշեգործներ	83	29	112
6. Դարբիններ	85	238	323
7. Ներկարարներ	7	62	69
8. Պղնձագործներ	28	10	38
9. Զինագործներ	44	26	70
10. Դերձակներ	62	118	180
11. Արծաթագործներ	48	107	155
12. Ատաղձագործներ	136	353	489
13. Ջուլհակներ	427	3779	4206
14 Գլխարկ կարողներ	141	12	153
15. Շիլաչիներ	40	51	91

Արհեստների նույն տեսակները, փոքր տարբերությամբ, տարածված են եղել նաև Արևմտյան Հայաստանում, մասնավորապես քաղաքներում։ Հասկանալի է, որ յուրաքանչյուր քաղաքում կարող է բացակայած լինել վերևում բերված արհեստներից որևէ մեկը և, ընդհակառակը, կարող են տարածված լինել արհեստի այլ տեսակներ։ Նպատակ չունենալով տալ Հայաստանի քաղաքներից յուրաքանչյուրում տարածված արհեստների բոլոր տեսակների նկարագրությունը, անհրաժեշտ ենք համարում նշել հետևյալը։

Արհեստագործության զարգացմանը այս կամ այն քաղաքում հիմք է ծառայել գյուղատնտեսական հումքը (գլխավորապես բամբակը, բուրդը, կաշին), որի մի մասը ենթարկվել է տնային վերամշակման՝ հենց գյուղական ընտանիքներում (տնային արդյունաբերություն), իսկ մյուս մասը անցել է քաղաքային արհեստավորների ձեռքը, որոնք արտադրել են կա՛մ անմիջականորեն պատվիրատուի, կա՛մ էլ շուկայի համար։ Մետաղամշակությունը կատարվում էր դարբնի, պղնձագործի, արծաթագործի, ոսկերչի կողմից, բուտ որում ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում տարածված արհեստ էր դարբնությունը։ Դարբնի արհեստանոցն այն ունիվերսալ արհեստանոցն էր, ուր պատրաստվում էին ինչպես տարբեր արհեստների համար անհրաժեշտ մետաղյա գործիքներ, երկրագործական գործիքներ ու նրանց մասեր, այնպես էլ կենցաղային զանազան առարկաներ։ Պղնձագործությամբ զբաղվողները պղնձից պատրաստում էին զանազան ամաններ (կաթսաներ, թասեր, ափսեներ, ջրամաններ, դուլլեր) և այլ իրեր։ Մետաղագործ արհեստավորների մեջ, մասնավորապես Արևմտյան Հայաստանի մի քանի քաղաքներում, կարևոր դեր են ունեցել արծաթագործները ու ոսկերիչները։ Ոսկերչության հիմնական կենտրոն հանդիսացել է Վան քաղաքը, որտեղ ոսկերիչ արհեստավորները պատրաստում էին շատ նուրբ և բարձր ճաշակի ոսկյա զանազան իրեր ու զարդարանքներ։ Վան քաղաքի արծաթագործները պատրաստում էին արծաթյա գավաթներ, ծխախոտի տուփեր, բաժակակալներ, սափորներ, ափսեներ, ապարանջաններ և այլ իրեր։ Վանի ոսկերիչ և արծաթագործ վարպետների պատրաստած իրերը լայն հռչակ էին ստացել և արտահանվում էին երկրից դուրս։ Վանից հետո ոսկերչության և արծաթագործության կարևոր կենտրոններ էին Երզնկան, Բաղեշը, Երզրումը։

Անհրաժեշտ է նշել նաև, որ հայ արհեստավորների մի զգալի մասը գտնվում էր Հայաստանից դուրս՝ Վրաստանում, Աստրախանում, Ղրիմում, Արևմտյան Եվրոպայի շատ ու շատ վայրերում, Հնդկաստանում և այլուր։

Մանուֆակտուրային արտադրության XVIII—XIX դարերում արդյունաբերության այս ձևը անհրաժեշտ զարգացման գեռ չէր հասել։ Ճիշտ է, որոշ հեղինակներ նույնիսկ խոսում են այդ շրջանում որպես թե գործարանային արդյունաբերության մասին, սակայն փաստ է, որ այն, ինչ դասվել է գործարանների շարքը, մեծ մասամբ մանր ապրանքային արտադրություն է եղել, որի զարգացումը հացրել է մանուֆակտուրային ձեռնարկությունների առաջացմանը։ Այսպես օրինակ, լեռնահանքի հանույթի ու հանքաքարի վերամշակության գծով անցյալում եղած մանր

ապրանքային ձեռնարկությունների զարգացման բաղայի վրա XVIII դ. վերջերին միայն առաջացել են սահմանափակ թվով մանուֆակտուրային ձեռնարկություններ։ Մենք նկատի ունենք պղնձի, արծաթի, ոսկու և անագի մշակումը։

Մինչև XVIII դ. երկրորդ կեսը Ալավերդու և Զանգեզուրի մետաղահանքերի մշակության վերաբերյալ չկան համապատասխան տեղեկություններ, թեպետ հայտնի է, որ դրանք մշակվել են շատ հնուց։ XVII դ. պատմիչ Հակոբ Կարնեցին տեղեկություններ է հաղորդում Գյումուշխանայի ոսկու, արծաթի, պղնձի, արճճի և երկաթի հանքերի մշակության մասին։ «Եւ անտի ուղիղ ի կողմն հիւսիսոյ ձորն է Ծանախոյ, ունի գիւղք և փոքր քերտորայք... և ունի քաղաք զԿիմուշխանան... եւ բնակիչք սորա հայ և հոռոմք բազում... և ելանէ աստի ոսկի և արծաթ ընտիր բազում, ելանէ նաև պղինձ, արճիճ, և երկաթ բազում, որ Արզրում և շրջակայքն նորա լնուն»[1]։ Այս վկայությունը, սակայն, չի խոսում այն մասին, թե արտադրությունն ի՞նչ ձև ուներ։ Հավանական է, որ նա ունեցել է մանր ապրանքային արտադրության բնույթ։

Ինչ վերաբերում է Ալավերդու և մերձակա մետաղահանքերի մշակությանը, ապա տեղեկությունները վերաբերում են ուշ շրջանին, այն է՝ XVIII դ. երկրորդ կեսին։ XIX դ. հետազոտողները ցույց են տվել, որ մինչև XVIII դ. 70-ական թթ. Ալավերդու և Զանգեզուրի մետաղահանքերի մշակությունը ընդհատված է եղել, և միայն 1763—1770 թթ. է հիմք դրվում սկզբում Ախթալայի և ապա Ալավերդու մետաղաձուլական ձեռնարկություններին։ Աղբյուրներում հիշյալ ձեռնարկություններն անվանվում են «գործարաններ», որն անշուշտ, ճիշտ չէ։ «Լեռնային հանդեսի» («Горный журнал») 1863 թ. IV հատորում, ապա և լեռնային արդյունաբերության պատմության մասին հետագա հեղինակների կողմից բերված փաստական նյութի ուսումնասիրությունից պարզվում է, որ հիշյալ ձեռնարկություններն սկզբնապես ոչ միայն գործարաններ, այլև մանուֆակտուրաներ չեն եղել։ Առաջին աղբյուրում հիշատակվում է, որ քննարկվող ժամանակաշրջանում Ախթալայում և Ալավերդում հանքաքարի հանույթը կատարվել է առանձին ընտանիքների կողմից (այսպես կոչված ընտանեկան կոոպերացիայի ձևով), որոնք և վերամշակել են այն։ Պատահական չէ, որ նույն աղբյուրում ասված է, թե գործարանատերերի քանակը որոշվում էր այն ընտանիքների թվով, որոնք ապրում էին գործարաններում։

Լեռնային գործի վերականգնման մասին Մ. Ա. Շոստակը հաղորդում է, որ սկզբում հիմք դրվեց Ախթալայի գործարանին, 1770 թ.՝ Վալվարի, կամ ինչպես անվանում են այժմ՝ Ալավերդու, ավելի ուշ՝ Շամլուղի գործարանին։ Շատ չանցած դրանք հասան ծաղկուն վիճակի, այն աստիճան, որ Ախթալայի գործարանը մեկ տարվա ընթացքում տվեց 498 լիտր արծաթ (1 լիտրը = 3,6 կգ)։ Սակայն ոչ բոլոր տարիներին էր այդպես, որոշ դեպքերում ստացվում էր միայն 300, իսկ հաճախ՝ 200 լիտր, երբեմն էլ ոչ ավելի, քան 150 լիտր արծաթ[2]։ Կովկասում լեռնային գործի պատմությունը շարադրող մեկ ուրիշ հեղինակ հաղորդում է, որ լեռնային գործի զարգացումը Ալավերդում տեղի է ունեցել 1770-ական թթ., շնորհիվ այն բանի, որ վրաց թագավոր Հերակլը Թուրքիայից այնտեղ է հրավիրել հույն լեռնագործների, որոնք զարգացրել են այստեղ լեռնային արդյունաբերությունը։ Հույն հանքամշակողների ավագ Անաստասիա Խոջաֆատովի հաղորդման համաձայն, Ախթալայի և Ալավերդու գործարաններում արտադրվում էր մինչև 5, 10, 15 հազար փութ պղինձ[3]։ Իհարկե, արտադրված պղնձի քանակությունը խիստ չափազանցված է, եթե նկատի ունենանք ձեռնարկությունների խիստ պրիմիտիվ տեխնիկան և այն, որ աշխատանքները կատարվել են ձեռքով, որը և հիմք է տալիս մեզ այդ ձեռնարկությունները համարել մանուֆակտուրաներ և ոչ թե գործարաններ։ Ավելին, արտադրության տեխնիկայի, տեխնոլոգիայի և էկոնոմիկայի մասին մեզ հասած տեղեկությունները ցույց են տալիս, որ Ախթալայի, Ալավերդու և Շամլուղի ձեռնարկությունները ոչ միայն գործարաններ չէին, այլև խիստ ցածր մակարդակի վրա գտնվող մանուֆակտուրաներ էին։

Այդ երևում է հետևյալից։ Նախ, հանքաքարի հանույթը կատարվել է ամենապրիմիտիվ ձևով, գերազանցապես վերին շերտում։ Ինչ վերաբերում է հանքաքարից մետաղի ստացմանը, դա նույնպես կատարվել է բացարձակապես ձեռքի աշխատանքի օգնությամբ և ամենապրիմիտիվ մի եղանակով, որը կոչվում էր «ասիական եղանակ»։ Հանքաքարն այրելու համար գարսում էին փայտի ու փայտածուխի կույտեր, փայտերի արանքներում տեղավորում էին հանքաքարը,

---

[1] Հակոբ Կարնեցի, Տեղեկագիր վերին հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 15։

[2] Տե՛ս М. А. Шостак, Исторический очерк развития горного дела на Кавказе, Тифлис, 1901.

[3] Տե՛ս С. Эсадзе, Очерк истории горного дела на Кавказе, Тифлис, 1903, էջ 12—14։

իսկ վրան լցնում մանր հանքանյութը։ Այրման պրոցեսն արագացնելու նպատակով ներքևից օդի համար թողնում էին լայն անցքեր։ Կույտի շուրջը շարում էին քարեր, ինչպես սովորական խարույկներ պատրաստելիս։ Այրված հանքաքարից ձուլման նույնքան պրիմիտիվ եղանակով, այսպես կոչված հանքային ցածր վառարաններում, ստանում էին սև պղինձ, որից կարմիր պղինձ ստանալու համար ուժեղացնում էին ջերմությունը և ձուլման ճանապարհով մաքրում այն սև պղնձից։ Մետաղի ելքը հանքաքարից կազմում էր ոչ ավել, քան ամբողջ պարունակության 70 տոկոսը. մեկ տոննա պղինձ ստանալու համար ծախսվում էր մինչև 14—15 տոննա հանքաքար, 17 տոննա փայտածուխ և 8 խորանարդ մետր փայտ։ Պարզ է, որ պղնձի ձուլման այս տեխնոլոգիան ինքնին վկայում է այն մասին, որ մենք գործ ունենք ոչ թե գործարանի, այլ դեռևս զարգացման ցածր աստիճանի վրա գտնվող արդյունաբերության՝ մանուֆակտուրայի հետ։

Ալավերդու և Ախթալայի պղնձաձուլական ձեռնարկությունները շարունակում են իրենց գոյությունը մինչև 1785 թ., երբ ավերվում են Օմար խանի կողմից։ 1795 թ. ձեռնարկությունը նորից է բացվում Աղա-Մահմեդ խանի հարձակման հետևանքով։ Պղնձաբդյունաբերությունը վերակենդանացավ միայն XIX դ. սկզբին, երբ Վրաստանի հետ միասին Ռուսաստանին միացան Հայաստանի հյուսիսային շրջանները, ուր և գտնվում էին Ալավերդու, Ախթալայի և Շամլուղի պղնձահանքերը։

Մանուֆակտուրային տիպի ձեռնարկություններ գոյություն են ունեցել նաև Երևան քաղաքում. դրանք աղբյուրներում բնութագրված են որպես գործարաններ։ Պետք է նկատել, որ հիշյալ ձեռնարկություններն իրենց տեխնիկայով և էկոնոմիկայով ոչ միայն գործարաններ չէին, այլև շատ հեռու էին նույնիսկ կատարյալ մանուֆակտուրաներ լինելուց։ Այդ կարգի ձեռնարկությունների շարքին կարելի է դասել օճառի պատրաստման, կաշվի մշակման ձեռնարկությունները և ներկատները։

Քաղաքներում գոյություն ունեին օճառ արտադրող հատուկ ձեռնարկություններ, որոնք կազմում էին պետական մենաշնորհ և արված էին մենավարձով։ Այդ հանգամանքն, անշուշտ, վճռող դեր էր խաղում օճառը աշխատավորական մասսաների համար խիստ անմատչելի լինելու գործում, որով և սահմանափակվում էին նրա օգտագործման շրջանակները։ Մենաշնորհով արված ձեռնարկություններում պատրաստված օճառի համար սահմանվում էր շատ բարձր գին, որի հետևանքով այն գնվում և օգտագործվում էր բացառապես արտոնյալ դասի կողմից։ Թերևս դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ գյուղացիները, իբրև կանոն, օճառ չեն օգտագործել և այն փոխարինել են զանազան բույսերով։ Այսպես, Արաքս գետի ափերին աղակալած հողերում աճող «օշնա» կոչվող բույսը չորացնելուց և այրելուց հետո առացած մոխիրը գյուղացիներն օգտագործում էին օճառի փոխարեն։

Մանուֆակտուրային ավել կամ պակաս չափով մոտ ձեռնարկություններ էին հանդիսանում կաշի մշակող ձեռնարկությունները (դաբաղիանանները)։ Այդպիսի ձեռնարկություններ (թվով 32) գոյություն են ունեցել Երևանում։ Դրանք բոլորն էլ տեղավորված են եղել Երևանի Զորագյուղ թաղում, Հրազդան գետի ափին։ Կաշվի մշակման տեխնոլոգիան եղել է խիստ պարզ և միաժամանակ պրիմիտիվ. չորացած կաշին սովորական կարասներում թրջելուց հետո ենթարկել են հետագա մշակման, առանձին դեպքերում միայն ներկելով այն։ Պատրաստի կաշին իրացնելու համար պետք էր ստանալ մենավարձի թույլտվությունը, որը պետք է դրոշմեր կաշին և դրա համար ստանար սահմանված քանակով դրամ։

Ինչ վերաբերում է ներկատներին, ապա նույնիսկ դժվար է նրանց մանուֆակտուրաներ անվանելը։ Ձեռնարկությունն իր ամբողջ «սարքավորմամբ» հետևյալ պատկերն էր ներկայացնում. մի հասարակ խրճիթ, նրանում տեղավորված մի կարաս և կտորը կարասի մեջ խառնելու մի ձող։ Ձեռնարկության այդպիսի ծավալն ինքնըստինքյան կանխորոշում էր նրանում աշխատողների խիստ սահմանափակ քանակը և արտադրանքի չնչին չափերը։ Ներկատները երևանում տեղավորված են եղել քաղաքի որոշակի մասերում։ Կարմիր գույնի ներկող բոլոր ձեռնարկությունները (որոնք կոչվում էին շիլաչի-խանա) կենտրոնացած էին մի թաղում և այդ թաղն էլ կոչվում էր Շիլաչի-մահալա, իսկ կապույտ գույնի ներկողները (բոյա-խանաները) տեղավորված էին մի այլ թաղամասում, որի անունով էլ այդ թաղը կոչվում էր Բոյաչի-մահալա։

Արտադրական ձեռնարկություններից հիշատակվում է Երևանի ապակու «գործարանը»։ Հիշյալ ձեռնարկության ընդհանուր և արտադրության տեխնոլոգիայի նկարագրությունը բավական մանրամասն տրված է Շոպենի կողմից, թեպետ և գործարանը մինչ այդ արդեն դադարել էր գործելուց։ Ձեռնարկությունը պարսկական տիպի է եղել և աչքի է ընկել իրեն հատուկ կառուցվածքով։ Ապակու մասսան պատրաստվել է սաշոտակի ձև ունեցող հատուկ վառարանում։ Այդ մասսան ստանալու համար որպես հումք օգտագործվել է ավազի և սոդայի հավասար խառ-

նուրբը, որին ավելացվել է մարգանից։ Թողարկվել է չոր գույնի ապակի, որ մեծ մասամբ օգտագործվել է մզկիթներում և պարսից մեծամեծների բնակարաններում՝ որպես լուսամուտի ապակի։

Արդյունաբերական ձեռնարկություններից հատուկ հետաքրքրություն են ներկայացնում Էջմիածնի տպարանը և թղթի «գործարանը»։ Առաջինը հիմնադրվել է 1771 թ., իսկ երկրորդը՝ 1774 թ.։ Էջմիածնի տպարանում տպագրվում էին հոգևոր բնույթի գրքեր, օրացույցներ, տեղեկագրեր և այլն։ Պետք է նկատել, որ Էջմիածնի համար տպագրական գործը ոչ միայն հոգևոր, կրոնական պրոպագանդայի միջոց էր, այլև խոշոր եկամտի աղբյուր։ Էջմիածնի տպարանում տպագրված գործերը և մասնավորապես եկեղեցական օրացույցները ուղարկվում էին աշխարհի զանազան մասերը, առաջին հերթին՝ հայ խոշոր գաղթավայրերը։ Ուղարկված դրականության մի մասը վաճառքի էր հանվում, իսկ մյուս մասը, նվերների ձևով, ուղարկվում էր անվանի հարուստ վաճառականներին, որի փոխարեն ստացվում էին մեծ գումարի նվիրատվություններ։ Տպարանն էլ հենց կազմակերպվել էր հնդկահայ հարուստ Միքայել Խոջաջանյանի միջոցներով։ Տպարանի անընդմեջ աշխատանքն ապահովելու նպատակով, Խոջաջանյանի միջոցներով կազմակերպվում է Էջմիածնի թղթի «գործարանը»։ Թղթի գործարանի կազմակերպման վրա ծախսվել է 7800 թուման։ Որպես հումք օգտագործվում էր բամբակը։ Սակայն բացի բամբակից, Էջմիածինը զանազան վայրերից հավաքում և օգտագործում էր նաև հնամաշ շորեր. այդ երևում է 1781 թ. Էջմիածնի կաթողիկոսի կողմից Ախալցխա ուղարկված գրությունից, որտեղ բացի այլ բաներից խնդրվում է հավաքել և Էջմիածնի թղթի գործարանի պետքերի համար ուղարկել հնոտի շորեր. «Եվ հնոտի շոր և որ ինչ վասն թղթաշինութեան ժողովեցի զայն ևս, զա պարտ եղել առա, և զուր, սիրելիքդ մեր, պարտիք յօժարութեամբ տալ զհնոտիս՝ որքան և կարեւցեք, որ ձեզ չէ ինչ ծանրութիւն, իսկ թղթաշինութեան Սրբոյ Աթոռոյս ի մեծ ձեռնտուութիւն և ձեզ պատճառ բարեաց վարձուց ի տեառնէ»[1]։ Թղթի գործարանը շատ կարճ ժամանակ է գործում, և նրա փակվելուց հետո թուղթն ստացվում է արտասահմանից։ Ինչ վերաբերում է տպարանի և թղթի գործարանի աշխատողների քանակին և նրանց արտադրանքի չափերին, ապա այդպիսի տեղեկություններ աղբյուրները դժբախտաբար չեն հաղորդում։

Այսպիսով, պատմական դրականության մեջ քաղաքացիություն գտած այն վերսիան, թե XIX դ. սկզբին Հայաստանում գոյություն չի ունեցել արդյունաբերություն, ինչպես և այն պնդումը, թե եղել է գործարանային արդյունաբերություն, չեն համապատասխանում իրականությանը։

Փաստական նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ XVIII դ. վերջերին և XIX դ. սկզբներին Հայաստանում գոյություն են ունեցել արդյունաբերության հետևյալ ձևերը. տնային արդյունաբերություն, մանր ապրանքային արտադրություն, արհեստագործություն և նոր-նոր միայն սկիզբ առնող մանուֆակտուրային արտադրություն։

УРОВЕНЬ ПРОМЫШЛЕННОГО РАЗВИТИЯ АРМЕНИИ В КОНЦЕ XVIII И НАЧАЛЕ XIX ВЕКОВ

О. Е. ТУМАНЯН

(Резюме)

В изучаемый период времени в Армении господствовал феодальный строй. В соответствии с этим здесь существовали предкапиталистические формы промышленности, которые до сих пор обстоятельно не изучены историками и экономистами. Единственным источником в этой области является труд И. Шопена «Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи», вышедший в 1852 г. В указанной работе Шопен не различает отдельные формы промышленности, в результате чего искажает действительную картину экономического уровня Армении в начале XIX в.

В настоящей статье сделана попытка восстановить действительное положение вещей и дать научное толкование проблемы. Исследование вопроса приводит к заключению, что в указанный период в Армении существовали домашняя промышленность, мелкотоварное производство, ремесла и зачатки мануфактурного производства.

[1] Տե՛ս «Էջմիածին», 1958, էջ 31։